«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Վերապատրաստվող ուսուցչի

հետազոտական աշխատանք

Հետազոտության թեմա՝ Համագործակցային ուսուցման միջոցով ուսումնառության արդյունավետության բարձրացումը

Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոց

Հետազոտող ուսուցիչ՝ Ավետիսյան Գոհար

Մենթոր ուսուցիչ՝ Պողոսյան Հասմիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3
Գրական ակնարկ.....5
Գործնական համատեքստ.....16
Ամփոփում.....19
Գրականության ցանկ.....20

Նախաբան

Մանկավարժությունը ուղղված է ապագա սերնդի կրթության և դաստիրակության խնդիրների լուծմանը, աշակերտների ընդունակությունների, անձնային որակների բացահայտմանն ու զարգացմանը: Մանկավարժական գուրծունեության ընթացքում ի հայտ են գալիս բազմաթիվ խնդրահարույց իրավիճակներ, որոնք լուծման, շտկման և կարգավորման պահանջ ունեն: Մանկավարժական գործընթացում հանդիպող խնդիրների ճիշտ լուծումը մեծապես կախված է մանկավարժից, նրա մասնագիտական, անձնային որակներից և վարպետությունից: Ցանկացած մանկավարժ, ով ցանկանում է հմուտ և ճկուն կառավարել իրավիճակը լուծել գործընթացին խոչընդոտող խնդիրը, պետք է անընդհատ ինքնակատարելագործմամբ զբաղվի, ուսումնասիրի ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, զարգացնի կարողություններ և հմտություններ տարբեր խնդրահարույց իրավիճակներում ճիշտ լուծում գտնելու համար:

Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակները իրականացնելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի մեթոդներ, հնարներ:

Մեթոդ (հուն. methodos) բառը ամենալայն իմաստով նշանակում է «ճանապարհ դեպի որևէ նպատակ»: Այն սուբյեկտի հասարակական գործունեության կարգավորված, կազմակերպված եղանակ է: Ինչպես ընդունված է ասել, ոչ միայն հետազոտության արդյունքը, այլև դեպի այն տանող ճանապարհը (մեթոդը) պետք է լինի ճշմարիտ:

«Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ», - ասել է **Բ.Ք.Սքինները:**

Ֆ. Բեկոնը մեթոդը համեմատել է լուսամփոփի հետ, որը մթության մեջ լուսավորում է ճանապարհը: Նա ասել է.«Կաղը գնալով ճանապարհով ավելի շուտ տեղ կհասնի, քան ճանապարհից շեղված վազորդը»:

Ռ. Դեկարտը մեթոդ է անվանել այն «ճշգրիտ և պարզ կանոնները», որոնց պահպանումը թույլ է տալիս տարբերել կեղծը ճշմարիտից[1]:

Ուսուցման մեթոդ հասկացությունը իր մեջ ներառում է 3 խնդիր.

1.Ի՞նչ սովորեցնել՝ կրթության բովանդակություն

1 Декарт Р. Избранные производения. М.,1950, էջ89

2.Ինչու՞ սովորեցնել՝ կրթության նպատակ

3.Ինչպե՞ս սովորեցնել՝ ուսուցման մեթոդիկա

Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանց ընտրությունը կատարելիս ոչ միայն պետք է հաշվի առնել առարկան, այլ նաև թե ինչպես են սովորում աշակերտները[2]:
Ժամանակակից աշխարհում աշակերտների սովորելու ցանկությունը, ուշադրությունը և ներգրավվածությունը դասապրոցեսին ապահովելը բավականին բարդ խնդիր է, որի հետևանքով էլ պետք է ստեղծել ուսումնաարդյունավետ միջոցներ:

Իմ աշխատանքի ընթացքում ես ևս բախվեցի այնպիսի իրավիճակի, երբ սովորողները չէին ներգրավվում դասապրոցեսի մեջ,չունեին սովորելու ցանկություն և հետաքրքրություն ուսուցման նկատմամբ:

1)Հետազոտության խնդիրը.
Աշակերտներին ինչպե՞ս ներգրավել դասապրոցեսի մեջ ,առաջացնել առարկայի նկատմամբ հետաքրքրություն և սովորելու ցանկություն:

2)Խնդրի լուծման համար առաջադրեցի հետևյալ հարցերը.
1.Ինչպե՞ս աշակերտների մոտ առաջացնել հետաքրքրություն և սովորելու ցանկություն:

2.Ի՞նչ միջոցով մեծացնել աշակերտների ակտիվությունը ուսուցման պրոցեսում
3.Ինչպե՞ս զարգացնել աշակերտի սեփական մտածողությունը:
Խնդրի լուծման համար ուսումնասիրեցի տարբեր մեթոդական ձեռնարկներ և որպես ուսումնաարդյունավետության բարձրացման միջոց կիրառեցի համագործակցային ուսուցման եղանակները:

3)Աշխատանքի նպատակը.
Նպաստել կրթության որակի և աշակերտների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն:

[2] Алехин А.Ю. Общиеметодыобучениявшколе. —К.: Радянськашкола, 1983. — 244с.էջ 6-13

Գրականության ակնարկ

Խմբային արդյունավետ աշխատանքի հիմքում ընկած է յուրաքանչյուրի մասնակցության ապահովումը և այն, որ թույլ չտրվի, որ խմբի անդամներից միայն մեկը կամ երկուսը ստանձնեն ողջ պատասխանատվությունը: Ուսուցչի դերը այդօրինակ գործընթացում շատ կարևոր է՝ աշխատանքը արդյունավետ ուղղորդելու համար[3]:

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում: «Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»[4]: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝ դասարաններում ուսուցումը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը, բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորությունը, ուսուցման առանձնահատկություններին, ժամանակակից մոտեցումներին համահունչ լինելը:

[3] Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Եր., «Տիգրան Մեծ», 2004, 336 էջ

[4] Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ

Համագործակցային ուսուցման տարրերն, ըստ Ջոնսոնների, հիմնականում հինգն են. դրական փոխկախվածություն, դեմ առ դեմ փոխազդեցություն, անհատական հաշվետվություն և պատասխանատվություն, միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ, խմբային գործընթացի մշակում: Հետագայում այդ տարրերին ավելացվեց ևս մեկը: Պասի Սահլբերգը փոխներգործուն /ինտերակտիվ/ առաջադրանքը դիտարկում է որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: «Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ»: Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: «Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին»: Համագործակցային ուսուցման կազմակերպումը Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտություններիձեռքբերումը,այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը[5]:

[5] Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բալաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:

Համագործակցային ուսուցման մեթոդներն են.

1. Աշակերտների թիմային առաջադիմություն

2. Խճանկար

3. Շրջագայություն պատկերասրահում

4. Երեք բանալի և մեկ կողպեք

5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:Այն համարվում է առավել հեշտ կիրառվող մեթոդներից մեկը և առանձնապես օգտակար է համագործակցային ուսուցման մեթոդները կիրառող սկսնակ ուսուցիչների համար: Այն խթանում է սովորողների համագործակցությունը և մասնակցությունը: Մեթոդի կիրառության շրջանակներում կիրառվում է գնահատման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ:

Ընթացքի նկարագրություն: Դաս-դասարանային ավանդական մեթոդով նոր թեման բացատրելուց հետո դասարանը բաժանել 4-5 հոգանոց տարասեռ խմբերի՝ յուրաքանչյուր խմբում ընդգրկելով գերազանց, միջին

եւ ցածր առաջադիմությամբ աշակերտների, ապահովելով նաեւ տղա-աղջիկ հավասարությունը(հնարավորության դեպքում): Խմբերին տրվում է նոր թեմային առնչվող հանձնարարություն՝ նշելով, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացրել է նյութը: Ապա ստուգվում է նյութի յուրացման աստիճանը: Այս ընթացքում, սակայն, թիմի անդամներն արդեն չեն կարող օգնել միմյանց. յուրաքանչյուրն ինքնուրույն է կատարում առաջադրանքը: Առաջադրանքի կատարման ստուգման համար կիրառվող գնահատման համակարգն այնպիսին է, որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականով իր ներդրումն է անում խմբի ընդհանուր ցուցանիշում: Գնահատման միավորների սանդղակի ընտրությունը ուսուցչի հայեցողության տակ է: Համագործակցային ուսուցման այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է սովորողների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ սովորողների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են որոշակի ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պետք է մի կողմից աջակցեն իրենց դասընկերներին բարելավելու իրենց ցուցանիշները, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այսպիսով՝ խմբի յուրաքանչյուր աշակերտ ունի սովորելու և դասընկերներին օգնելու խթան:

Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել եւ փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի եւ նրա գործընկերների կողմից, այնուհետեւ լրամշակվել է Սլավինի եւ վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդի կիրառության ժամանակ սովորողները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի ասպեկտի, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում դասընկերներին: Խճանկարը աշակերտների թիմային առաջադիմության մեթոդից տարբերվում է նրանով, որ սովորողները խորամուխ են լինում նյութի որոշակի ասպեկտի մեջ:

Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

Նկարագրությունը: Նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում: Սովորողները բաժանվում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի «փորձագետ»: Փորձագետները ուսումնասիրում են իրենց ենթաթեման, հավաքում տեղեկատվություն:Աշխատանք փորձագիտական խմբում:Փորձագիտական խմբերի սովորողները համեմատում են և հարստացնում իրենց նյութերը: Աշխատանք ուսումնական խմբում: Յուրաքանչյուր «փորձագետ» հենակետային խմբի մյուս անդամներին սովորեցնում է իր ենթաթեման:Ավարտական աշխատանք:Սովորողներին անհատական թեմատիկ աշխատանք է հանձնում ամբողջ թեմայից:

Ամփոփում

Արդյունքներն ամփոփվում են ըստ անհատական և խմբային ցուցանիշների:Վերոնշյալ փուլերով անցնելիս ուսուցիչը պետք է կատարի հետեւյալ քայլերը:

Քայլ 1. Հենակետային խմբերի ձեւավորումը

Խմբեր ձևավորելիս անհրաժեշտ է առաջնորդվել աշակերտների թիմային առաջադիմության մեթոդի մոտեցմամբ: Այդկերպ կձևավորվեն ինչպես առաջադիմությամբ, այնպես էլ աղջիկ-տղա իմաստով տարասեռ խմբեր: Խմբերի ձեւավորումից հետո հայտարարվում են խմբային աշխատանքի կանոնները: Օրինակ՝

1.առաջադրանքի իրենց հանձնարարված հատվածն ավարտելուց հետո սովորողները պետք է մնան խմբի հետ այնքան ժամանակ, մինչեւ բոլորն ավարտեն,

2.խմբի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է, որ բոլորը հասկանան և կարողանան կատարել առաջադրանքը,

3.եթե կան հարցեր, անհասկանալի հատվածներ, ապա աշակերտը նախևառաջ դիմում է իր թիմակիցների օգնությանը, հետո, եթե դրա կարիքը կա, նաև՝ ուսուցչին: Կանոններն ընդունելուց հետո ուսուցիչը ձևակերպում է առաջադրանքը: Հիմնական խմբերի անդամները, միմյանց աջակցելով, ընթերցում են ամբողջ նյութը, ապա քննարկում անհասկանալի հասկացությունները, հատվածները:

:

Քայլ 2. Փորձագիտական խմբերի ձևավորումը: Երբ աշակերտները ծանոթանում են ամբողջ նյութին, հիմնական (մայր) խմբի յուրաքանչյուր անդամի տրվում է առաջադրանքը և փորձագիտական թերթիկը: Առաջադրանքը կարող է լինել նյութի առանձին հատվածի ուսումնասիրություն, խնդրի որոշակի ասպեկտի վրա կենտրոնացում: Առաջադրանքը ստանալուց հետո սովորողները հավաքում են նյութեր իրենց ենթաթեմայի վերաբերյալ: Ապա փորձագիտական խմբի անդամների հետ կիսում են իրենց նյութերը, կատարում ճշգրտումներ: Փորձագիտական խմբի անդամները նաև որոշում են, թե ինչ մեթոդներ, մատուցման եղանակներ, աղյուսակներ, դիագրամներ են օգտագործելու իրենց մայր խմբերի անդամներին սովորեցնելու ընթացքում: Փորձագիտական խմբերում նույնպես պետք է ընդգրկել առաջադիմությամբ տարասեռ աշակերտների: Կարևոր է նաև փորձագիտական թերթիկների մշակումը: Դրանք աշակերտներին կօգնեն կենտրոնանալ հիմնական հարցերի վրա:

Քայլ 3. Փորձագետները սովորեցնում են հենակետային խմբի անդամներին Փորձագիտական խմբերում աշխատանքն ավարտելուց հետո աշակերտները վերադառնում են հենակետային խմբեր: Յուրաքանչյուր փորձագետ սովորեցնում էիր ենթաթեման, պարզում, թե որքանով են իր դասընկերները յուրացրել այն:

Քայլ 4. Գնահատում Խճանկարի ժամանակ գնահատումը պետք է իրականացնել երեք մակարդակներով: Առաջին՝ պարզել, թե որքանով են խմբերը արդյունավետ գործում, որքանով են բարելավվել սովորողների համագործակցային աշխատանք կատարելու հմտությունները: Երկրորդ՝ որքանով են աշակերտները առաջադիմել առանձին խնդիրներ ուսումնասիրելու եւ դրանք իրենց դասընկերներին սովորեցնելու առումներով: Երրորդ՝ որքանով է յուրաքանչյուր աշակերտ յուրացրել ուսումնական նյութը, առաջադիմել: Խմբային գործընթացը գնահատելիս անհրաժեշտ է պարզել, թե որքանով են սովորողները արդյունավետ գործել որպես խմբի անդամներ: Սա ներառում է խոսելու, լսելու, մտքերը կիսելու, խմբին օգնելու, աջակցելու հմտությունները:

Օրինակ՝ այդ նպատակով կարելի է տալ հետևյալ հարցերը.

1.Արդյոք խմբի բոլո՞ր անդամներն էին մասնակցում աշխատանքին:

2. Խմբում կայի՞ն գերիշխող աշակերտներ (կեղծ լիդերներ):

3. Խմբային հաղորդակցումը աջակցո՞ղ էր:

Փորձագիտական աշխատանքի գնահատում: Այս դեպքում գնահատվում են աշակերտների փորձագիտական աշխատանք կատարելու հմտությունները: Օրինակ՝ ուսումնական նյութերի, սկզբնաղբյուրների, մոդելների հետ աշխատելու, չափումներ, նշումներ կատարելու, աղյուսակներ, դիագրամներ, գրաֆիկներ կազմելու միջոցով ձեռքի տակ եղած նյութը մշակելու և դասընկերներին սովորեցնելու հմտությունները: Նյութի բովանդակության յուրացման գնահատում: Գնահատման այս ձեւը կիրառելիս անհրաժեշտ է օգտագործել աշակերտների թիմային առաջադիմության մեթոդում ներկայացված գնահատման նմուշը: Գնահատվում են և՛ առանձին աշակերտները, և՛ խմբերը:
Վերջում անհրաժեշտ է ամփոփել արդյունքները, խրախուսել առաջադիմած աշակերտներին ու խմբերին:

Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ եւ կատարել անդրադարձ, ինչպես նաեւ զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու,քննադատաբար եւ ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Ընթացքը

1. Ուսուցիչն ուսումնական նյութը բաժանում է 4-6 մասերի եւ յուրաքանչյուր խմբին տալիս դրանցից մեկը՝ ինքնուրույն ուսումնասիրելու: Խմբերի թիվը կարող է մեծ լինել նյութի մասերի թվից: Այդ դեպքում նյութի նույն մասը կուսումնասիրի երկու խումբ:

2. Չորս հոգուց բաղկացած խմբերն աշխատում են ուսումնական նյութի իրենց տրված մասի վրա (ցանկալի է, որ առաջադրանքի կատարման տարբեր մոտեցումներ առաջարկվեն) եւ ստացված արդյունքները մշակում նկարի, կոլաժի, աղյուսակի, դիագրամի կամ գրաֆիկի տեսքով:

3. Պատրաստի աշխատանքները փակցվում են դասասենյակի կամ միջանցքի պատերին՝ ստեղծելով «պատկերասրահ»:

4. Խմբերի ներսում աշակերտները հաշվում են մինչեւ 4-ը եւ կազմում չորս նոր խումբ՝ըստ իրենց խմբի ներսում ունեցած համարների (դասարանի բոլոր «1» համարի աշակերտները՝ մեկ խումբ, «2»-ները՝ ուրիշ խումբ եւ այլն):

5. Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ, եւ տվյալ խմբի այն անդամը, որը մասնակցել է այդ իսկ ցուցանմուշի ստեղծմանը՝ կատարելով գիդի դեր, մանրամասն ներկայացնում է իրենց աշխատանքը, պատասխանում հարցերին եւ մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլոր խմբերը, միեւնույն ուղղությամբ «սահելով» ցուցանմուշների մոտով, ծանոթանում են բոլոր աշխատանքներին:

6. Պատկերասրահում շրջագայությունից հետո հիմնական (մայր) խմբերն իրենց աշխատանքները նորից քննության են ենթարկում՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ և վերլուծելով առաջացած հարցերը:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով:Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձեւավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն,ինչպես նաեւ համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք: Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից եւ թեմայից: Ընտրում ենք թեման եւ առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը եւ ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Խմբային հետազոտության մեթոդ:

Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության եւ համագործակցության վրա: Ի տարբերություն մյուս մեթոդների՝ խմբային հետազոտության հիմնական նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է: Թեեւ այս մեթոդի հեղինակը Թել-Ավիվի համալսարանի պրոֆեսոր Ծարոնն է, բայց մեթոդի ակունքները սկիզբ են առնում 20-րդ դարի սկզբի հայտնի փիլիսոփա ՋոնԴյուիի տեսությունից: Դյուին գտնում էր, որ դպրոցը պետք է աշակերտներին սովորեցնի միասին աշխատել՝ նրանց ներգրավելով իմաստալից ուսումնական ծրագրերում, որպեսզի հետագայում այդ ամենը կիրառեն կյանքում: Խմբային հետազոտություն կիրառող ուսուցիչը կարող է հետապնդել 3 փոխկապակցված նպատակ.

1. խմբային հետազոտությամբ աշակերտներին սովորեցնել համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրները

2. պայմաններ ստեղծել, որպեսզի աշակերտները խորությամբ յուրացնեն ուսումնական նյութի բովանդակությունը

3.սովորեցնել համագործակցել խնդրի լուծման հետազոտման ընթացքում:

Այսպիսով՝ այս նպատակների իրականացման արդյունքում խմբային հետազոտություն կատարող աշակերտները խորությամբ յուրացնում են ուսումնական նյութի բովանդակությունը, զարգանում են իրենց հետազոտելու և համագործակ ցելու հմտությունները:

Ընթացքը.

Քայլ 1. Խմբերի ձևավորումը և թեմայի ընտրությունը:

Խմբերի ձևավորման եւ թեմայի ընտրության հերթականությունը կարելի է փոխել: Որոշ դեպքերում ուսուցիչը կարող է ընտրել թեմաներ, ապա նոր, ըստ աշակերտների հետաքրքրության, ձեւավորել խմբեր: Այլընտրանքն այն է, երբ նախ ձեւավորում են խմբերը, ապա սովորողներն իրենք են ընտրում հետազոտության թեման: Այս տարբերակը նրանց հնարավորություն է տալիս զարգացնելու դասընկերների հետ բանակցելու և փոխզիջումների գնալու հմտությունները: Երբ խմբերը ձեւավորված են ու հետազոտության թեմաներն ընտրված, անհրաժեշտ է անցկացնել թիմ (խումբ) ձևավորող վարժություն, որոնք կարևոր միջոց են

համագործակցային ուսուցումը արդյունավետ դարձնելու ճանապարհին: Ստորև ներկայացնենք թիմ ձևավորող վարժությունների օրինակներ: Վարժություն Նկարագրություն Սիրած զբաղմունք-Խմբի անդամները միմյանց հարցնում են իրենց սիրած երաժշտության, սպորտի, նախասիրության մասին:Կենսագրություն-Խմբի անդամները միմյանց հարցնում են կենսագրական տվյալների մասին:

Քայլ 2. Խմբային աշխատանքի պլանավորումը

Աշակերտները որոշում են իրենց աշխատանքի բովանդակային ընդգրկումը,նախանշում են ռեսուրսները, մշակում գործողությունների պլան, որոշում խմբի անդամների պարտականությունները: Եթե խմբի բոլոր անդամներն ուսումնա սիրումեն ամբողջական թեման, ապա պարտականությունների բաժանումը հեշտ է կատարել՝ ընդամենը որոշելով, թե ով ինչ ռեսուրսներ է ուսումնասիրելու: Իսկ երբ խումբը բաժանվում է ենթախմբերի եւ յուրաքանչյուր ենթախումբ ուսումնասիրում է որեւէ ենթաթեմա, ապա անհրաժեշտ է նաեւ որոշել, թե ով է համակարգելու ենթախմբերի աշխատանքները, ով է պատրաստելու թեմայի ամբողջական ներկայացումը:

Քայլ 3. Հետազոտության իրականացումը

Սա խմբային հետազոտության ամենակարեւոր փուլն է: Այս փուլում են աշակերտները փնտրում ռեսուրսներ, հավաքում տեղեկատվություն: Այս ընթացքում ուսուցիչը, պարբերաբար շրջելով (սահելով) խմբերում, պետք է պարզի, թե ինչ են անում աշակերտները, ինչ աջակցության կարիք ունեն:

Քայլ 4. Արդյունքների ամփոփում եւ ներկայացման նախապատրաստում

Աշակերտները այս փուլում վերլուծում եւ գնահատում են իրենց ձեռքի տակ եղած տեղեկատվությունը, իսկ ուսուցիչը շրջում է խմբերում և աջակցում նրանց: Առաջին հերթին անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել հետազոտվող թեմայի վրա, թույլ չտալ շեղվել թեմայից: Ոչ պակաս արդյունավետ է նաև աջակցության ամենահումանիստական ձևը՝ աջակցել խրախուսելով: Կարելի է նաև խորհուրդ տալ աշակերտներին իրենց ստացած արդյունքները ներկայացնելիս պարբերաբար օգտվել աղյուսակներից, դիագրամներից և գրաֆիկներից:

Քայլ 5. Հետազոտության արդյունքների ներկայացում

Այս փուլն ունի երկու հիմնական նպատակ՝

լուսաբանել կատարված հետազոտությունը, և կարողանալ հետաքրքիր ու հասկանալի ձևով ներկայացնել այն:

Հետազոտության արդյունքները կարելի է ներկայացնել բանավոր, գրավոր,բանավոր-գրավոր, պատկերային ձևով (օրինակ՝ համակարգչային մշակմամբ, ցուցապաստառներով, աբստրակտ նկարով կամ կոլաժով): Նշենք, որ նախընտրելի է բազմազան ձևերի օգտագործումը:Խմբային հետազոտության գնահատումը: Խմբային հետազոտության գնահատումը պետք է իրականացվի այս մեթոդի երեք նպատակների հասանելիության ստուգման առումով՝

- հետազոտական հմտությունների,

- խմբային (համագործակցային) հմտությունների,

- բովանդակության յուրացման[6]

Բովանդակության յուրացման գնահատումը: Ավանդական մեթոդներով աշխատող ուսուցիչների հիմնական գործունեությունը սովորողների յուրացրած նյութի բովանդակության յուրացման աստիճանի ստուգումն ու գնահատումն է: Համագործակցային եղանակով աշխատող ուսուցչի համար նույնպես շատ կարևոր է պարզել, թե որքանով են աշակերտները յուրացրել իրենց հետազոտած նյութը: Ուսուցիչը դա կարող է գնահատել՝ հիմնվելով աշակերտների ներկայացման վրա: Կարելի է նաեւ նրանց հարցաթերթիկ տալ, հանձնարարել թեմատիկ (ստուգողական) աշխատանք, ռեֆերատ կամ շարադրություն:

[6] https://multiurok.ru/blog/hamagortsakts-ayin-owsowts-man-met-odnere.html

Գործնական համատեքստ

Հետազոտությունը կատարել եմ Արմավիրի մարզի Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոցում՝ IX գ դասարանում, որտեղ սովորում են 30 աշակերտներ, որոնք ուսումնառության հանդեպ ցուցաբերում են տարբեր հետաքրքրություններ:

Ուսուցման գործընթացում ես բախվեցի իրավիճակի, երբ աշակերտները չէին ներգրավվում դասապրոցեսի մեջ, չունեին սովորելու ցանկություն և ուսուցման նկատմամբ հետաքրքրություն: Ուսումնասիրելով համագործակցային ուսուցման մեթոդները՝ փորձեցի լուծել այդ խնդիրը,բարձրացնել ուսուցման արդյունավետությունը,ներգրավել ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին, առաջացնել սովորելու ցանկություն և հետաքրքրություն առարկայի հանդեպ:

Հետազոտական դասերին հրավիրել եմ դասադիտարկողներ, ովքեր հետևել են աշակերտների աշխատանքին դասերի ընթացքում:

Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը ուսուցանելիս օգտվել եմ համագործակցային ուսուցման մեթոդներից:

Դասի խթանման փուլում գրատախտակին գրեցի « Մեսրոպ Մաշտոց » և առաջարկեցի կատարել « Բազմանիստ » վարժությունը : Վերջնաբառը ստացան Ոսկեդար, սկզբնաբառով և վերջնաբառով կազմեցին նախադասություն: Օգտվելեմ համագործակցային խմբային կենտրոններ աշխատանքի մեթոդից:

Աշակերտներին բաժանել եմ 4 խմբի , յուրաքանչյուր խմբին տվել եմ համապատասխան համապատասխան առաջադրանք և սահմանել աշխատանքի կատարման համար ժամանակ:

Հետազոտողների կենտրոն

Տեքստից փնտրեցին և գտան տրված հարցերի պատասխանները:
. Ով էր Մ.Մաշտոցը:
.Երբ և որտեղ է ծնվել Մաշտոցը:Ինչպես կբնութագրեքնրա տեղն ու դերը հայ ժողովրդի պատմության մեջ:
.Համառոտ նկարագրեք Մաշտոցի գործունեությունը մինչև գրերի գյուտը:
.Ինչ պայմաններում Մաշտոցը մտածեց գրեր ստեղծելու անհրաժեշտության մասին:
. Երբ և որտեղ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը (ըստ Կորյունի և ըստ Խորենացու):
.Ինչպես եք գնահատում հայոց գրերի պատմական նշանակությունը:
.Երբ է մահացել և որտեղ է թաղվել Մաշտոցը:

Բացահայտողների կենտրոն

Բացահայտեցին և ներկայացրեցին հայոց այբուբենի թվային բոլոր գաղտնիքները:

Ստեղծագործողների կենտրոն

Նկարեցին Մաշտոցի դիմանկարը, ներկայացրեցին այբուբեն-աղոթքը, երգեցին շարականներից, գրեցին ակրոստիքոս:

Գիտելիքների ստուգման կենտրոն

Կազմեցին դասի վերաբերյալ հարցեր, ստեղծեցին խաչբառ,որով ստուգվեց աշակերտների ստացած գիտելիքները:

Դասի ընթացքում հետևեցի և դիտարկեցի խմբերի աշխատանքը: Խմբում յուրաքանչյուր անդամ ոգևորվածությամբ էր աշխատում և յուրաքանչյուր խումբ փորձում էր հնարավորինս կազմակերպված և արագ կատարել իր առջև դրված խնդիրը,քանզի նշել էի, որ գնահատման ընթացքում հաշվի եմ առնելու նաև խմբում անդամների կազմակերպվածությունը և միմյանց հետ համագործակցությունը: Սահմանված ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացրին իրենց կատարած աշխատանքի արդյունքները,ոգևորված և ակտիվ էին նաև ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները : Ձեռք բերված գիտելիքները ստուգելու համար կատարեցի անդրադարձ ՝ հարցման միջոցով,պատասխանները մեծ ոգևորվածությամբ էին հնչում, քանի որ հենց իրենցակտիվ ներգործության միջոցով էին սովորել: Համեմատություն անցկացրի նաև այլ IXա դասարանում դասավանդած նույն թեման ոչ համագործակցային մեթոդով: Արդյունքները բավականին տարբեր էին,այն դասարանում որտեղ համագործակցային ուսուցման մեթոդ էի կիրառել, ուսուցման որակը բարձր է:Այստեղից էլ հետևություն արեցի,երբ աշակերտը ուսումնասիրողի, բացահայտողի դերում է,սիրով և հետաքրքրությամբ էկատարում իր հանձնարարությունը,բարձրանում է ուսուցման արդյունավետությունը: Կիրառեցի համագործակցային ուսուցման մեթոդներ նաև այլ դասաժամերին: «Գրերի գյուտին հաջորդող գրական-մշակութային շարժումը» թեման ուսուցանելիս օգտվել եմ«Շրջագայություն պատկերասրահում», «Հնգյակ», «Հիգրոպեանոց ազատ շարադրանք» աշխատանքի մեթոդներից: Աշակերտներին բաժանել եմ 3 խմբերի,յուրաքանչյուր խմբի տվել եմ դասանյութի համապատասխան հատված (Ագաթանգեղոս,Եղիշե,Ղազար Փարպեցի), հանձնարարություն և ժամանակ: Խմբերի բոլոր աշակերտները աշխատեցին ոգևորությամբ, արդյունավետ, աշխատանքի արդյունքները ներկայացրեցին պաստառների միջոցով:Աշխատանքը նպաստեց ինքնուրույն աշխատելու,ստեղծագործաբար մտածելու,աշխատանքը ներկայացնելու,վերլուծելու հմտությունների զարգացմանը:Հատկապես այս մեթոդը խթան էր ցածր առաջադիմությամբ սովորողների համար,նրանք իրենց որոշակի ներդրումը ունեցան խմբի աշխատանքի արդյունքում և յուրացրեցին նյութը,դարձյալ ուսուցման որակը բարձր էր: Ուսուցման արդյունավետության բարձրացմանը նպաստող համագործակցային ուսուցման մեթոդներ կիրառեցի նաև Փ.Բուզանդ,Մ.Խորենացի պատմագիրների կյանքը և ստեղծագործությունը ուսուցանելիս:

Ամփոփում

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի ամենակարևոր նախապայմանը ուսուցման տարբեր մեթոդների տիրապետելն է: ՈՒսուցման գործընթացում համագործակցային ուսուցման կիրառումը նպաստում և ապահովում է մեծ առաջընթաց: Կատարած հետազոտությունից եկա այն եզրահանգման, որ համագործակցային ուսուցման միջոցով մեծանում է աշակերտների սովորելու ցանկությունը, սերը և հետաքրքրվածությունը ուսուցման նկատմամբ,բարձրանում է ուսուցման որակը : Զարգանում է աշակերտի վերլուծական մտածողությունը և սեփական տեսակետը հայտնելու կարողունակությունը, որի շնորհիվ էլ բարձրանում է ուսուցման արդյունավետությունը: Համագործակցային մեթոդների կիրառումը նպաստեց նաև ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների ներգրավմանը դասապրոցեսի մեջ: Ուսուցման գործընթացում ես բախվեցի իրավիճակի, երբ սովորողները չունեին սովորելու ցանկություն և ուսուցման նկատմամբ հետաքրքրություն,չէին ներգրավվում դասապրոցեսի մեջ:Ուսումնասիրելով և կիրառելով համագործակցային ուսուցման մեթոդները՝ լուծեցի այդ խնդիրը:

Գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում,Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:

2. Յու. Կ. Բաբանսկի, «Մանկավարժություն», 1–ին մաս, Երևան,1986,էջ7

3. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Եր., «Տիգրան Մեծ», 2004, էջ 336

4. Գ. Ե. Ղույումչյան, «Մանկավարժություն», գիրք1–ին, էջ14, Երևան, 2005

5. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006,էջ 96

6. https://multiurok.ru/blog/hamagortsakts-ayin-owsowts-man-met-odnere.html

7. АлехинА.Ю. Общиеметодыобучениявшколе. —К.: Радянськашкола, 1983. — 244с.էջ 6-13

8. Декарт Р. Избранные производения. М.,1950, էջ89